մունաք, որ ի վերայ երդողացն ջրվաթէր: Եւ
կային չատրվանքն ձկունք: Եւ այլ չատրվան 50
մի կայր, որ վերեւն չինած էր խոպիտակ
մէոմէրէ կոյս աղջիկ մի զեղեցիկ, որ ունէր
ի ձեռին հայելի մի մեծ, եւ հայէր ի նա իբրեւ
զկենդանի. Եւ մեք մերձ եղեալ պչուցեալ
հայէաք. յանկարծակի ի բաց տարեալ զհայե- 55
լին եւ բերանոյն ջուր թափեաց ի վերայ մեր,
որ փախաք: Եւ տեսաք այլ աղբիւր մի. Եւ
մէջ եւ բոլորն բաղում հանդանակք եւ մաս-
խարա բաներ, որ տեսողքն բերանաբաց
մնային. Եւ ջուր սրբակեալ թանային զմար- 60
զիք: Եւ չինած էր վիշապք, օձք, զաղանք
եւ անասունք յայն մորենոյն իբրեւ զկեն-
դանի:

Եւ յառաջ գնացեալ տեսաք ծառ մի ազդ
եւ ազդ պտղովք: Եւ մինչ կայաք ներքեւն եւ 65
պչուցեալ հայէաք, եղեւ սաստիկ հեղեղ յոս-
տոց եւ ճղերուն. Եւ մեք թոջեցաք յեռս փախ-
չելով: Եւ ընդդէմ նմին կայր հաւուզ մի եւ
ի նմա ձկունք ազդ եւ ազդ. Եւ մինչ մեք հիա-
ցեալ զարմանայաք, ե՛լ յոտաց մերոց ջուր 70
յորդ. Եւ մեք քանի փախչէաք, ջուրն զհետ
գայր: Եւ չատ ազաչեցաք զդլխաւորն եւ եցոյց
մեզ օլուխնի եւ լուլանի իբր զկողովակս
արճճէ զուզած, բեւեռած ի գետնի. Եւ ջուր
թողուին ի նոսա եւ զէոնիֆած էր այնպէս, 75
որ երբ բանային զբերանս ջրոց, ջուրն ի վեր
վազէր եւ թանայր զմարդիկ. Եւ երբ կամէին՝

54 պչուցեալ երկիցս կրկնուած: — 67 թոչեցաք: